

**ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՇԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ 0214**

**<< ՈՍԿԵՐԶՈՒԹՅՈՒՆ >> ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 0214.01.02.4 <<ՄՇԱԿՈՂ՝ ԿԻՍԱԹԱՆԿԱՐԺԵՔ ԵՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՔԱՐԵՐԻ >> ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

<b>Պաշտոնի /զբաղմունքի/ անվանումը</b>	<b>Կիսաթանկարժեք և թանկարժեք քարեր մշակող</b>
<b>I. Դերը</b>	Թանկարժեք մետաղներից պատրաստված զարդերի համար նախատեսված թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր մշակող
<b>II. Խնդիրների բնագավառները</b>	
<b>Խնդիրների բնագավառ 1. Նախապատրաստական աշխատանքներ</b>	
<b>Աշխատանքային գործընթացը</b>	Ըստ կիսաթանկարժեք և թանկարժեք քարերի առանձնահատկությունների նախապատրաստել աշխատատեղը, գնահատել տրամադրված հումքի որակը՝ըստ ներկայացված փաստաթղթերի: Ստուգել համապատասխան ստուգիչ-չափիչ միջոցների, գործիքների և սարքավորումների անխափան աշխատանքային վիճակը:
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. Հումքի վերաբերյալ տեղեկությունները պարզ են և ճիշտ բ, գործիքները և սարքավորումները ճիշտ են ընտրված և պատրաստ են աշխատանքային գործընթացին:</p> <p>գ. ճիշտ է ընտրվել հումքի մշակման համար օժանդակ նյութերը</p> <p>դ. արտահագուստը համապատասխանում է աշխատանքային պահանջներին:</p> <p>ե. աշխատատեղը նախապատրաստված է անվտանգության կանոններին համապատասխան</p> <p>զ. նախապատրաստական աշխատանքների արդյունքների համար փաստաթղթերը ճիշտ են լրացված:</p>
<b>Խնդիրների բնագավառ 2. Մշակման աշխատանքի պլանավորում</b>	
<b>Աշխատանքային գործընթացը</b>	Ըստ տեխնիկական քարտի պահանջների կատարել հումքի կամ կիսաֆաբրիկատի որակի գնահատում և սահմանել մշակման հաջորդականության սխեման, ճշտել մշակման ձևերը, որակի չափանիշները և կատարման ժամկետները:
<b>Կատարման չափանիշներ</b>	ա.որակը համապատասխանում է տեխնիկական քարտի պահանջներին:

	<p>բ. ճիշտ է ընտրված մշակման հաջորդականությունը</p> <p>գ. ճիշտ է ընտրված մշակման ձևերը, որակի չափանիշները և կատարման ժամկետը:</p>
<b>Խնդիրների բնագավառ 3. Գործիքների և տեխնոլոգիայի ընտրություն</b>	
<b>Աշխատանքային գործընթացը</b>	Ըստ Հումքի տեխնիկական քարտի պահանջների և առաջադրված խնդրի՝ ընտրել համապատասխան չափիչ-ստուգիչ միջոցները, գործիքները, սարքավորումները և հաստոցներն ու օժանդակ նյութերը, կատարել օպտիմալ տեխնոլոգիայի ընտրություն:
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ընտրված են առաջադրանքի կատարման համար անհրաժեշտ բոլոր գործիք – սարքավորումներն ու օժանդակ նյութերը</p> <p>բ. ընտրված է գործընթացն իրականացնելու համար անհրաժեշտ տեխնոլոգիան</p>
<b>Խնդիրների բնագավառ 4. Կիսաթանկարժեք քարերի մշակում</b>	
<b>Աշխատանքային գործընթացը</b>	Կիսաթանկարժեք քար մշակողը տեխնիկական քարտը և հումքը կամ կիսաֆաբրիկատը ստանալուց հետո ծանոթանում է տեխնիկական քարտի պահանջներին և դրան համապատասխան նախաձեռնում քարի մշակման տեխնոլոգիական գործընթացը (չափանշում, կտրում, հղկում, նիստավորում):
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. Կատարում է հումքի նշագրում և կտրում</p> <p>բ. Կատարում է նախնական հղկում</p> <p>գ. Կատարում է սոսնձում, չափաբերում</p> <p>դ. Կատարում է նիստավորում</p> <p>ե. Կատարում է քարի լվացում և որակի գնահատում</p>
<b>Խնդիրների բնագավառ 5. Թանկարժեք քարերի մշակում</b>	
<b>Աշխատանքային գործընթացը</b>	Թանկարժեք քար մշակողը տեխնիկական քարտը և հումքը կամ կիսաֆաբրիկատը ստանալուց հետո ծանոթանում է տեխնիկական քարտի պահանջներին և դրան համապատասխան նախաձեռնում քարի մշակման տեխնոլոգիական գործընթացը
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. Կատարում է ալմաստի կտրում, ճեղքում</p> <p>բ. Կատարում է նախնական հղկում, կլորացում</p> <p>գ. Կատարում է նիստավորում</p> <p>դ. Կատարում է քարի լվացում և որակի գնահատում</p>
<b>Խնդիրների բնագավառ 6. Աշխատատեղի մաքրում և կատարված աշխատանքի հանձնում</b>	

<b>Աշխատանքային գործընթացը</b>	<p>Քար մշակողը կատարում է պատրաստի քարերի ստուգում, ըստ որակի տեսակավորում, կշռում, մականշում, հանձնում, աշխատատեղի և գործիքների մաքրում:</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. հանձնված թանկարժեք և կիսաթանկարժեք մշակված քարերը համապատասխանում են տեխնոլոգիական քարտի պահանջներին՝ հաշվի առնելով աշխատանքի ընթացքում բնականոն կորստի նորման:</p> <p>բ. քարերը տեսակավորված են, մականշված, կշռված, փաթեթավորված, ունեն ապարանքային տեսք</p> <p>գ. հումքից պատրաստի քարերի ստացման կորուստները նվազագույն են</p> <p>դ. աշխատատեղը և գործիքները գտնվում են մաքուր վիճակում:</p>
<b>III. Պատասխանատվությունը /անմիջական պատասխանատվության շրջանակ/</b>	<p>Պատասխանատվություն է կրում՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• կատարած աշխատանքների ճշգրտության, որակի,</li> <li>• իր առջև դրված աշխատանքային պարտականությունների կատարման ժամանակի, արտադրական միջոցների արդյունավետ օգտագործման,</li> <li>• հումքի կորուստների նորմայի պահպանման,</li> <li>• սարքավորումների՝ խնամքով օգտագործման, կազմակերպության ներքին կարգուկանոնի պահպանման,</li> <li>• աշխատանքի անվտանգության կանոնների, հակահրդեհային անվտանգության կանոնների, արտադրական սանիտարիայի կանոնների պահպանման համար:</li> </ul>
<b>IV. Լեզուները</b>	<p>Տիրապետել հայոց լեզվին և հաղորդակցվել առնվազն մեկ օտար լեզվով (պարզ շփման մակարդակով): Օտար լեզվով հասկանալ պարզ նախադասություններ և ,իր մասնագիտության առնչվող, հաճախ օգտագործվող արտահայտություններ:</p>
<b>V. Համակարգիչը</b>	<p>Կատարել պարզ գործողություններ օգտվելով՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• համակարգչային Microsoft office-ից և internet-ից, պետք է ունենալ նաև մասնագիտական ինքնագարգացման ու կատարելագործման նպատակով անհրաժեշտ տեղեկատվությունները ընտրելու և մասնագիտական աղբյուրներից դրանք ձեռք բերելու հմտություն:</li> </ul>

<p><b>VI. Գիտելիքները</b></p>	<p>Պետք է տիրապետի մասնագիտական ոլորտի վերաբերյալ ընդհանուր գիտելիքների՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• մասնագիտության մեջ օգտագործվող կիսաթանկարժեք և թանկարժեք քարերի ծագումը, քիմիական և ֆիզիկական հատկությունները, տեսակները, ռանձնահատկությունները,</li> <li>• մասնագիտության մեջ կիրառվող գործիքները, ստուգիչ-չափիչ միջոցները, սարքավորումները և նրանց աշխատանքային գործընթացը,</li> <li>• մասնագիտական ոլորտում օգտագործվող օժանդակ նյութերի տեսակները,</li> <li>• գծագրական, էսքիզային աշխատանքների կատարելու հիմունքները,</li> <li>• մաթեմատիկական ոչ բարդ հաշվարկների կատարումը,</li> <li>• կիսաթանկարժեք և թանկարժեք քարերի մշակման տեխնոլոգիաները, քարերի մշակմանը առնչվող ժամանակակից համաշխարային ձեռքբերումները,</li> <li>• էթիկայի հիմնական հասկացությունները, գործընկերների, ղեկավարների և հաճախորդների հետ հաղարդակցվելու էթիկայի կանոնները,</li> <li>• կազմակերպության արտադրատնտեսական գործունեության սկզբունքները, ձևերը, բնութագիրն ու հիմնական ցուցանիշները,</li> <li>• բնապահպանական տարածքային հիմնախնդիրները,</li> <li>• տեխնաձին արտակարգ իրավիճակների և տարերային աղետների հետևանքների վերացման գործելաձևերը,</li> <li>• տուժածներին առաջին օգնության ցուցաբերման կանոնները:</li> </ul>
<p><b>VII. Կարողությունը և հմտությունը</b></p>	<p>Պետք է ունենա.</p> <ul style="list-style-type: none"> <li>• մասնագիտական տեսական ու գործնական գիտելիքներ, չափիչ ստուգիչ միջոցները կիրառելու գործիքներ, սարքավորումներ, հաստոցներ ,օժանդակ նյութերը ճիշտ ընտրելու, ռեժիմները կարգավորելու կարողություն,</li> <li>• տեխնիկական քարտերը, գծագրերը և էսքիզները կարդալու կարողություն,</li> <li>• աշխատանքային անվտանգության և առողջության</li> </ul>

	<p>պահպանման նորմատիվ պահանջների կարողություն</p> <ul style="list-style-type: none"> <li>• օրինական կարգով կիսաթանկարժեք և թանկարժեք քարերի ձեռքբերման կարողություն,</li> <li>• քարերի մշակման համար նախատեսված չափիչ-ստուգիչ միջոցներից, գործիքներից, սարքավորումներից, հաստոցներից օգտվելու կարողություն,</li> <li>• իրավական ակտերի համապատասխան իր իրավունքները պաշտպանելու կարողություն,</li> <li>• հարկային դաշտում աշխատելու կարողություն,</li> <li>• անհատական և խմբային աշխատանք կատարելու կարողություն, մարդկանց հետ շփվելու կարողություն,</li> <li>• փոփոխվող աշխատանքային պայմաններում հիմնավոր որոշումներ կայացնել ու վերլուծություններ կատարելու կարողություն,</li> <li>• սարքավորումների անսարքությունների պատճառների բացահայտման և վերացման, փորձարկման և կարգավորման աշխատանքներ կատարելու հմտություն,</li> <li>• իրավական ակտերից, տեղեկատու գրականությունից օգտվելու հմտություն (այդ թվում նաև օտար լեզվով),</li> <li>• գծագրերը և սխեմաները կարդալու հմտություն,</li> <li>• Կատարված աշխատանքների արդյունքը գնահատելու հմտություն,</li> <li>• հաշվետվություններ, պահանջագրեր և այլ փաստաթղթեր կազմելու հմտություն:</li> </ul>
<p><b>VIII. Անձի որակական հատկանիշներ</b></p>	<p>Պետք է ունենա՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• պատասխանատվության զգացում, ազնվություն, աշխատասիրություն, շփվելու և բանակցելու կարողություն, հարգալից վերաբերմունք դրսևորելու և լսելու կարողություն, սուր աչք,</li> </ul> <p>ավելի ցածր որակավորում ունեցող աշխատողների կողմից կատարված աշխատանքի համար պատասխանատվության ստանձնում:</p>